ԿԱՐԾԻՔ

Դավիթ Վահանի Քարիմյանի «Կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով,

Ը.00.02–«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Անցած տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում բարեփոխվել է բնակչության կենսաթոշակային ապահովման համակարգը: Այս բարեփոխումների անվիճելի ձեռքբերումը կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի ինստիտուցիոնալ զարգացումն է: Բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել է կենսաթոշակային բազմաշերտ համակարգ:

2006 թվականին կառավարությունը հավանություն է տվել կենսաթոշակային համակարգի բարեփոխման հայեցակարգին, որով ամրագրվել է պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրման սկզբունքը: 2010 թ. դեկտեմբերն ընդունվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ նոր օրենքը, որում նշվում է, որ կենսաթոշակային համակարգը ներառում է՝ ա) պետական կենսաթոշակային ապահովում, բ) կուտակային և գ) կամավոր բաղադրիչներ:

Նույն 2010 թվականին ընդունվեց «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքը, և ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգը մտավ ակտիվ բարեփոխումների գործընթաց, որի արդյունքում ձևավորվեց կենսաթոշակային քառաստիճան համակարգ:

Ատենախոսության թեման արդիական է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային համակարգում իրականացվում են բարեփոխումներ, որոնք էլ իրենց հերթին կոչված են լուծել սոցիալական կարևորագույն խնդիրներ:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է բացահայտել ՀՀ-ում պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներին պետության կողմից կուտակային վճարների սուբսիդավորման արդյունավետ մեխանիզմները և մշակել ՀՀ կապիտալի շուկայում, մասնավորապես՝ ենթակառուցվածքային ծրագրերում կենսաթոշակային ֆոնդերի պահանջվող ներդրումային

մեխանիզմներն ու գործիքակազմը, ապահովելով ֆոնդերի պահանջվող կայունությունն ու եկամտաբերությունը:

Այս նպատակին հասնելու համար աշխատանքում դրված են հետևյալ խնդիրները՝

- կենսաթոշակային համակարգի ընդհանուր հայեցակարգի վերլուծություն:
- կենսաթոշակային ֆոնդերի դերի բացահայտում կապիտալի շուկայի զարգացման և երկրի տնտեսական աճի գործում:
- ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների և օրենսդրական դաշտի վերլուծություն:
- ենթակառուցվածքային ծրագրերում ՀՀ կենսաթոշակային հիմնադրամների մասնակցությունը ներդրումային մեխանիզմների մեջ:
- Հայաստանի Հանրապետությունում պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներին կուտակային վճարների պետական սուբսիդիաների բարեփոխման արդյունավետ մեխանիզմների մշակում:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

- Կենսաթոշակային խնայողությունները խթանելու համար մշակվել է մոտեցում, որը ներառում է պետական համաֆինանսավորման փուլային փոխանցումը պարտադիր կուտակային սխեմայից կամավորի, և մասնակցի և նրա գործատուի կողմից վճարումների խթանումը կամավոր կենսաթոշակային ապահովագրությանը մասնակցելու պայմաններում եկամտահարկի գծով հարկային նվազեցումների սահմանափակումները վերացնելու միջոցով:
- Մշակվել է պետական-մասնավոր համագործակցության ենթակառուցվածքային ներդրումային նախագծերում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրման մեխանիզմ, որը նախատեսում է ակտիվների արժեթղթավորում՝ օգտագործելով համապատասխան սպասարկման գործիքներ:
- Մեխանիզմներ են մշակվել կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների հարկային կարգավորման՝ պետական և մասնավոր համագործակցության համար ակտիվների արժեթղթավորման միջոցով՝ հիմնված միջազգայնորեն ընդունված «հարկային չեզոքության» և արժեթղթավորման գործարքների տրանսֆերային գնագոյացման կարգավորման չափանիշների վրա:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունան մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը ու գործնական նշանակությունը, ինչպես նաև եզրակացությունները և առաջարկները:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են կենսաթոշակային համակարգի ընդհանուր հայեցակարգի էվոլյուցիան և Համաշխարհային բանկի բարեփոխման մեթոդաբանական հիմքերը, Եվրոպական հանձնաժողովի, ՏՀԶԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից կենսաթոշակային ապահովման հայեցակարգի և մոդելների մշակումը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ կենսաթոշակային համակարգի վիճակի համեմատական վերլուծություն» գլխում ներկայացված են ՀՀ կենսաթոշակային համակարգի իրավական դաշտի բարեփոխումներն ու վերլուծությունը, ինստիտուտների, ենթակառուցվածքների և կենսաթոշակային ֆոնդերի կառավարման համեմատական գնահատում:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության կուտակային կենսաթոշակային համակարգի բարեփոխման քաղաքականությունը և մեխանիզմները» գլխում առաջարկվում են ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխման քաղաքականության հայեցակարգը և հիմնական մոտեցումները. Հայաստանի Հանրապետությունում պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներին կուտակային վճարների պետական սուբսիդավորման մեխանիզմների բարեփոխում, ՀՀ կենսաթոշակային հիմնադրամների ներդրումային քաղաքականությունը ՊՄԳ ենթակառուցվածքային ծրագրերում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ըստ աշխատանքի բովանդակության և կառուցվածքի՝ պետք է հաշվի առնել հետևյալը.

— հարկավոր էր սկսել ոչ թե կենսաթոշակային համակարգի ընդհանուր հայեցակարգի էվոլյուցիայից և Համաշխարհային բանկի բարեփոխումների մեթոդաբանական հիմքերից, այլ կենսաթոշակային համակարգի հիմքերի ձևավորումից ու զարգացումից, մասնավորապես՝ կուտակայինից, սկսած առնվազն անցյալ դարից և շոշափել այս համակարգի հիմքերը Չիլիում:

— գլուխը պետք է սկսվեր, այլ ոչ թե ավարտվեր կապիտալի շուկայի զարգացման և երկրի տնտեսական աճի գործում կենսաթոշակային ֆոնդերի դերի դիտարկումով և վերլուծությունով :

— ՀՀ կենսաթոշակային համակարգի իրավական դաշտի վերլուծությունն ավելի համահունչ է առաջին, այլ ոչ՝ երկրորդ գլխին:

— Երկրորդ գլխում կարևոր էր դիտարկել կենսաթոշակային բարեփոխումների իրականացման արդյունավետության միջազգային փորձը և դրանից բխող և դրա հնարավոր կիրառումը (տեղայնացումը) Հայաստանում:

— երկրորդ գլխում կարևոր է դիտարկել նաև կենսաթոշակային բարեփոխումների գործնական ասպեկտները, բացթողումները և հիմնախնդիրները՝ անցում կատարելով ինստիտուտների համեմատական գնահատմանը, ենթակառուցվածքների և ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի կառավարմանը:

2. Կենսաթոշակային բարեփոխումները կոչված են ապահովելու սոցիալական ապահովությունը և խթանել ինչպես ներդրումային անվտանգությունը, այնպես էլ ֆինանսական անվտանգությունը, ժողովրդագրական անվտանգությունը և տնտեսական անվտանգության այլ տարրերը: Մեր կարծիքով, աշխատանքը կշահեր, եթե հաշվի առնվեր այդ փոխադարձ կապը:

3. Անընդունելի ենք համարում կուտակային կենսաթոշակային համակարգի տեսական հիմքերի դիտարկումն՝ առանց նշելու մեծ բարեփոխիչ պրոֆեսոր Խոսե Պինիերայի անունը և Չիլիում նրա նախաձեռնած բարեփոխումները: Սա հիանալի օրինակ է թե ինչպես զարգացող երկիրը կարող է օրինակ ծառայել ոչ միայն Հայաստանի համար, այլ արդեն այդպիսին է դարձել ԱՄՆ-ի, ԵՄ երկրների և տասնյակ այլ երկրների համար:

4. Վերջին գլխում ցանկալի է, որ հեղինակը ոչ միայն արտահայտի իր տեսակետը Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի բարեփոխումների քաղաքականության հայեցակարգի և հիմնական մոտեցումների վերաբերյալ, ինչպես նաև պետության կողմից Հայաստանի Հանրապետությունում կուտակային վճարների վերածումը որպես պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաների սուբսիդավորման մեխանիզմների բարեփոխման մասին, այլ նաև փորձեր տալ տնտեսական կանխատեսում այն իրավիճակի համար, երբ ՀՀ-ում կենսաթոշակային հիմնադրամների ներդրումային քաղաքականությունը կվերակողմնորոշվի պետություն – մասնավոր հատված համագործակցության ենթակառուցվածքային ծրագրերի:

5. Աշխատանքի վերջում անհրաժեշտ էր համառոտ վերլուծել ու հիմնավորել փորձագիտական հանրության դերը պետություն – մասնավոր հատված համագործակցության ծրագրերի համար ակտիվների արժեթղթավորման մեջ կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների ներդրումային մատրիցայի հարկային կարգավորման բարելավման գործում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանց այս տարրի մասնակցության պետություն – մասնավոր հատված համագործակցությունը լի է կոռուպցիոն ռիսկերով:

Եզրակացություն

Վերը նշված դիտողությունները սկզբունքորեն չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները և արդյունքները:

Դավիթ Վահանի Քարիմյանի ատենախոսությունն ինքնուրույն ու ամբողջական, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Դավիթ Վահանի Քարիմյանի «**Կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում**» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Թաթուլ Նորայրի Մանասերյան

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ստորագրությունը հաստատում եմ՝

Քնարիկ Վլադիմիրի Հովսեփյան

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ հետազոտական կենտրոնի գիտքարտուղար՝

17.06.2022թ.